

Լալիկ Մ. Խաչատրյան

Բանասիր. գիտ. դոկտոր

**ԿԱԽՅԱԼ ԱՐՄԱՏՆԵՐՈՎ ԱՌԱՐԿԱ ԵՎ
ՀԱՏԿԱՆԻՇ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՌԵՐՆ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ
ՄԱՏՅԱՆՈՒՄ**

(Կրկնավոր բարդություններ)*

Բանալի բառեր – կախյալ արմատ, կրկնավոր բարդություն, արմատատարբերակ, արմատական կրկնավորներ, ձայնդարձ, հերթագայություն, հնչյունաանկում, աճական:

Մուտք

Հոդվածում քննարկվում են կախյալ արմատներով այն համադրական կրկնավոր բարդությունները, որոնք արտահայտում են առարկա և հատկանիշ և առաջին անգամ գործածվել են Աստվածաշունչ մատյանում: Այդ կարգի կրկնավոր բարդությունները խմբավորվում են ըստ կախյալ արմատական բաղադրիչների արտահայտության պլանի և դասակարգվում են տարբեր խմբերի մեջ՝ արմատական (ջախջախ, ծործոր), և արմատատարբերակային (սպառսպուռ, կարկառ): Արմատատարբերակային կրկնավորների ձևավորման գործում կարևորվում են հնչյունափոխական որոշ գործոններ, ինչպես՝ ձայնդարձը (սպառսպուռ), հերթագայությունը (պաղպաջ), հնչյունաանկումը (հեղեղ), աճականը (աղջամուղջ) և այլն:

Բառակազմության հիմնական հասկացությունը **ձևույթն է**:

Ձևույթները, ըստ բառերի մեջ ունեցած իրենց բաշխական արժեքի և կապակցելության, լինում են երկու տեսակ՝ ա) ձևույթներ, որոնք ունեն գործառական անկախություն և կարող են հանդես գալ առանց այլ ձևույթների հարևանության (անկախ ձևույթներ), բ) ձևույթներ, որոնք զուրկ են գործառական անկախությունից և կարող են հանդես գալ միայն ուրիշ ձևույթների հետ միասին (կախյալ ձևույթներ)¹:

*Հոդվածն ընդունվել է տպագրության 25.11.2020:

1 Հմտ. **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1973, էջ 150:

տողները, սակայն, այդ բարդությունները չեն դիտարկել արմատական բաղադրիչների գործառական դերի տեսանկյունից, չեն տարբերակել կախյալ և անկախ արմատների գործառական արժեքը բառակազմական մակարդակում:

Սույն հոդվածում մենք քննության առարկա ենք դարձնելու Աստվածաշնչում գործածված այն համադրական կրկնավոր բարդությունները, որոնք կազմված են կախյալ արմատներով և արտահայտում են առարկա և հատկանիշ: Այդ բառերը տարբեր հաճախականությամբ գործածվել են գրաբարում և, որպես հայերենի բառային կազմի միավորներ, լրացրել են ընդհանուր հայերենի գոյական, ածական և մակբայ խոսքի մասերի շարքերը:

Այս կարգի բառերի քննությունը նախ՝ պայմանավորված է նյութի մատուցման համամասնությամբ (ելնելով հոդվածի ծավալի սահմանափակումից), երկրորդ՝ այն կարող է համեմատության եզր դառնալ 5-րդ դարի մակարդակում կրկնավոր բարդությունների ամբողջական քննության համատեքստում (համաժամանակյա քննություն). այդ սկզբունքով կարելի է նաև ցույց տալ տվյալ իրողության զարգացման շարժընթացը լեզվի տարբեր գոյավիճակներում (տարժամանակյա քննություն):

Կախյալ արմատների կրկնությամբ կազմված առարկա և հատկանիշ ցույց տվող բառերի արմատների ստուգաբանությունը ցույց է տալիս, որ այդ բառերը հիմնականում կազմավորվել են լեզվի զարգացման նախագրային գոյավիճակում և, իբրև նախագրային ժառանգություն, փոխանցվել են հին հայերենին ու գործածվել Աստվածաշնչում:

Առարկա և հատկանիշ արտահայտող բառերի ձևային պլանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կախյալ արմատները հազվադեպ են հանդես եկել անփոփոխ ձևով. այդ կարգի արմատները մեծ մասամբ ենթարկվել են հնչյունական զանազան փոփոխությունների: Վերջին հանգամանքը նկատի ունենալով՝ կատարել ենք արմատական կրկնավորների ներքին խմբավորումներ:

Աստվածաշնչի բառային կազմում առկա են կախյալ արմատներով հետևյալ համադրական կրկնավոր բարդությունները.

ա) գոյականներ.

աղջամուղջ	ծործոր	պաղպաջուն	
արհամարհան ք	կարկառ	ջախջախ	

Գյումրի, 2018, N 21, էջ 64-75): **Խաչատրյան Լ.**, Կրկնավոր բարդությունների ծայրագրային և հերթագայության տիպերն Աստվածաշնչի մատյանում («Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 2018, N 3, էջ 194-205): **Խաչատրյան Լ.**, Կրկնավոր բարդությունների արմատական տիպն հայերեն Աստվածաշնչի մատյանում («Բանբեր Երևանի համալսարանի», Հայագիտություն, Եր., 2019, N 1, էջ 52-62):

արարած	կարկուտ	սարսուռ	
անփոփոխելի	հեղեղ	սօսափին	
բողբոջ	ճաճանչ	տրտունջ	
դադար	յոպոպ	և այլն:	

բ) ածականներ և մակբայներ.

անդադար	շոգնոգ
անդանդաղ	պաղպաջ
անփոփոխելի	ջախջախ
թաքթաքուն	սպառսպուռ
խախուտ	և այլն ⁶
կակուղ	
կարկամ	

Վերոնշյալ կրկնավորների ուսումնասիրության ընթացքում հնարավոր կրկնություններից խուսափելու համար գոյականական, ածականական և մակբայական բարդությունները կդիտարկենք միասնական կերպով՝ դրանց կառուցվածքային ենթատիպերը ներկայացնելիս: Կախյալ արմատներով առարկա և հատկանիշ ցույց տվող կրկնավոր բարդությունների ձևային պլանի քննությունը ցույց է տալիս, որ այդ բարդությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ **արմատական** և **արմատատարբերակային** տիպերի: Ըստ այդ տիպերի՝ դիտարկենք վերոնշյալ բարդություններն Աստվածաշնչի թարգմանական գրքերում:

6 Աստվածաշնչի բառային կազմի քննությունը կատարել ենք ըստ հետևյալ աշխատության. «Համաբարբառ հին և նոր կտակարանաց», աշխատասիրություն **Թադևոս Վարդապետի Աստուածատուրեան Արապկերցոյ**, ի տպարանի Առաքելական աթոռոյ Սրբոց Յակովբեանց, Երուսաղէմ, 1895:

1. Արմատական կրկնավորներ.

Աստվածաշնչում գործածված արմատական կրկնավորները յուրահատուկ կառուցատիպեր են, որոնք կա՛մ պարզ արմատի կրկնություն են, կա՛մ ունեն նաև երկրորդական (բառակազմական) ձևություն, կա՛մ հնչյունափոխված ձևեր են:

ա) Պարզ արմատական կրկնավորներ են՝

Ծործոր կրկնավոր բարդության արմատական **ծոր** առանձին անգործածական բաղադրիչը համարվում է կա՛մ կովկասյան փոխառություն, կա՛մ բխեցվում է մի երկրորդ աղբյուրից⁷: **Ծործոր** բարդությունը «ծոր. ծերպ, խորշ, խոռոչ» իմաստներով գործածված է Աստվածաշնչում, հմնտ. Առաքեաց զնա **ի ծործորոյն** Քերբոնի (Ծնն., ԼԷ. 14) :

Ջախջախ բառի մեռած **ջախ** արմատը կապվում է **ջախել** («խփել») բայի հետ և հանգում է խեթ. zah(h) «խփել» և վրաց. jah («խփել») կամ jax («մրճահարել») արմատներին⁸: Կրկնավոր բարդությունը «խորտակված, կոտրատված, փշրված» իմաստներով գործածական է գրաբարում. հմնտ. Եւ ի նմանէ եղիցի **ջախջախսն** (Դանի. Բ. 42):

Ջախջախ սերող հիմքով Աստվածաշնչում հանդիպում են **ջախջախանք** (կոտորած, ջախջախում) և **ջախջախել** (կոտորել, կոտրել) բարդությունները. հմնտ. Պատահեցին զիս **ջախջախանք** մահու (Բ. Թագ., ԻԲ. 5): Եհար զնա այրն, եհար և **ջախջախեաց** (Գ Թագ., Ի, 37):

բ) Որոշ կրկնավորներ իրենց ձևային պլանում ունեն երկրորդական ձևություն. հմնտ. **աղաղակ, արարիչ, արարած, անփոփոխելի, թաքթաքուն** և այլն:

Ցույց տանք այս կրկնավորների դրսևորումները Աստվածաշնչում:

Աղաղակ – բարդությունը կազմված է կրկնավոր բաղաձայնական արմատից՝ **-ակ** վերջածանցով («գոչյուն» իմաստով)⁹. հմնտ. **Աղաղակ** Սողոմացոց ... յաճախեաց (Ծնն., ԺԸ. 20):

Աղաղակ սերող հիմքով Աստվածաշնչում հանդիպում են **աղաղակել** (կանչել) բայը, ինչպես նաև **աղաղակ առնել** և **աղաղակ բառնալ** (կանչել, ձայն տալ. բարձրաձայն երգել) բայական հարադրությունները. հմնտ. Եւ **աղաղակեցին** որդիքն Իսրայելի առ Տէր (Դատ., Ժ. 10): **Աղաղակ արասցէ** վամն նոցա (Եսայ., Ե. 30): Քաղաքացիքն ...**զաղաղակ բարձեալ** կարդային առ Շմավոն (Ա.Մակ., ԺԳ. 45):

7 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., «Ասողիկ» հրատ., 2010, էջ 367:

8 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 649: **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, հատ. 4, էջ 119:

9 Կախյալ ձևությոն հանգում է հնդեվրոպական *ala- բնածայնական արմատին (տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 33):

2. Արմատատարբերակային կրկնավորներ

Կախյալ արմատներով կազմված կրկնավորների յուրահատուկ խումբ են կազմում այն բարդությունները, որոնց կառուցվածքում երկրորդ բաղադրիչը կախյալ արմատի տարբերակ է, որ հանդես է եկել հնչյունական գանազան փոփոխություններով: Արմատի այդ կարգի փոփոխությունները հետևանք են ձայնդարձի, հերթագայության, հնչյունի անկման կամ հավելման (աճականի) երևույթների:

2.1. Ձայնդարձով կրկնավորներ

Ձայնդարձի հետևանքով են առաջացել **սարսուռ** և **սպառսպուռ** կրկնավորները:

Սարսուռ – ինքնուրույն գործածություն ունեցող անկախ **սառն** արմատի կրկնության հետևանքով առաջացած տարբերակներ են **սար** և **սուռ**, որոնք, իբրև արմատական բաղադրիչներ, գործածության անկախություն չունեն: **Սառն** բնիկ հայերեն բառ է՝ հնլս. kar- ձևից, որ ստորին ձայնդարձն է ke' (պաղել, ցրտել, սառնանալ) արմատի¹³: **Սարսուռ** նախնական նշանակությամբ՝ «հոգեկան ապրում, վախ, երկյուղ», որից իմաստի զարգացմամբ՝ «ցրտից կամ վախից՝ դող». հմնտ. Եւ ջերմամբ... եւ **սարսուռով** եւ խեթիք եւ երկիւղիւ (Բ. Օրէնք, ԻԸ. 22):

Սարսուռ սերող հիմքով Աստվածաշնչում հանդիպում է **սարսուիլ** (ցրտից կամ վախից դողալ) բայը. հմնտ. Ամենայն բազմութիւնն ... **սարսուա-ցեալք** դողային վասն ցրտութեան ձմերայնոյն (Ա Եզր., Թ. 6):

Սպառսպուռ– համարվում է պահլավական փոխառություն՝ *spar և spur-, որի նշանակությունն է «կատարյալ, լրացած, վերջացած»¹⁴: Կրկնավոր բարդությունը նշանակում է «մինչև սպառվելը, լրիվ չափով, ամբողջապես, ամբողջովին. գլխովին». այդ իմաստներով այն գործածվում է Աստվածաշնչում. հմնտ. Եւ խնդրեցին **սպառ սպուռ** զվրէժն արեան եղբարն իւրեանց (Ա Մակ., Թ. 42):

Աստվածաշնչում **սպառ** կախյալ արմատական բաղադրիչով հանդիպում են հետևյալ կազմությունները՝ **սպառազէն** (ամբողջովին զինված)՝ [Պատասխանի ետ **սպառազէնն** (Դ. Թագ., Է. 2)], **սպառազինութիւն** (լիովին՝ ամբողջովին զինված լինելը)՝ [Ա՛ռ դու քեզ **զսպառազինութիւնն** նորա (Բ. Թագ., Բ. 21)], **սպառել** (վերջացնել, ոչնչացնել, վերացնել)՝ [Իբրև **սպառեցին** ուտել զցորեանն (Ծնն., ԽԳ. 2)], **սպառուած** (վերջ, վախճան, ավարտ)՝ [Կա-

13 Տե՛ս **Աճառյան Հո.**, նշվ. աշխ., հատ. 4, էջ 191, 177:

14 Նույն տեղում, էջ 260:

տին¹⁸, որից բխում է բաղադրության իմաստը՝ «խիստ ոլորված. կծկված, կորացած, կուչ եկած»: Աստվածաշնչում հանդիպում է «ժլատ, կծծի» իմաստով. հմնտ. Մի՛ լիցիս յաւժար յառնուլն ձեռաւք, եւ ի տալն՝ **կարկամ** (Միրաք, Դ. 36):

Կարկամ սերող հիմքով Աստվածաշնչում հանդիպում է **կարկամել** (կծկվել, կորանալ, կուչ գալ) բայը. Եւ ահա կին մի ... էր **կարկամեալ** (Ղուկ., ԺԳ, 11):

Բողբոջ– կրկնավոր բարդություն է, որի հնագույն արմատը՝ **բող**, ունի «բույս, ծիլ» նշանակություն և հանգում է հնխ. bhol- ձևույթին՝ նույն նշանակությամբ: Երկրորդ բաղադրիչի հնչյունափոխությամբ ձևավորվել է **բողբոջ** կրկնավոր կազմությունը՝ իմաստային տարբեր զարգացումներով՝ «ծիլ, ընծյուղ. սերունդ, զարմ. ելունդ. պղպջակ»¹⁹: Աստվածաշնչում գործածված է «ծիլ, ընծյուղ» նշանակությամբ. հմնտ. Թ՛գենի արձակեաց **գբողբոջ** իւր, որթ մեր ծաղկեալք ետուն գհոտս իւրեանց (Երգ., Բ. 13):

Բողբոջ սերող հիմքով Աստվածաշնչում հանդիպում է **բողբոջել** բայը՝ «զարմ՝ սերունդ տալ» նշանակությամբ. հմնտ. Զի **մի՛ բողբոջեսցի** անօրէնքն (Բ.. Թագ., ԻԳ, 6):

Պաղպաջ– սերող հիմքն է **պաղ** (փայլ)՝ «ցնորք. փայլ» պայծառ. փայլուն» իմաստներով²⁰: Արմատակրկնությամբ (և հերթագայությանբ) **պաղպաջ** նշանակում է «փայլուն, փայլփլուն» – Փայլուն կամ **պաղպաջ** սպիտակ (Ղէտ. ԺԳ. 24):

Պաղպաջ սերող հիմքով է առաջացել **պաղպաջուն(ք)** գոյականը՝ «բարձր հանգստարան՝ փայլփլուն զարդերով. ծածկված կառք, զարդարված վրան» իմաստներով. հմնտ. Սաուղ ննջէր **ի պաղպաջունսն** (Ա Թագ. ԻԵ. 6–7):

Շոգմոգ– ծագում է պարզական **շոգ** արմատից՝ կրկնությամբ: Արմատն անհայտ ծագում ունի²¹: Բարդությունը նշանակում է «բանսարկու, քսու, բանբատող. շողորբոթելով». հմնտ. Սոքա են տրսնջողք եւ **շոգմոգք** (Յուդա., 1. 16):

Շոգմոգ սերող հիմքով բաղադրություններ Աստվածաշնչում չեն հանդիպում:

18 Տե՛ս **Զահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 393:

19 **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., հատ. 1, էջ 464:

20 Տե՛ս **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., հատ. 4, էջ 14-15:

21 Տե՛ս **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., հատ. 3, էջ 528:

Կակուղ բառի իմաստն է «փափուկ, ոչ կոշտ», հմմտ. Խօսիցի՝ ընդ քեզ հեզու-թեսանք եւ **կակուղ** բարբառով (Յոր., Խ. 22):

Կակուղ սերող հիմքով Աստվածաշնչում հանդիպում են **կակղել**, **կակ-դանալ** (կակուղ դառնալ, փխբ. սիրտը փափկել) բայերը. Ո՛չ ապաքէն նախ **կակղէ** երեսս նորա (Եսայ., ԻԸ, 23): Փոխանակ գի **կակղացաւ** սիրտ քո, եւ պատկառեցեր յերեսաց Տեառն (Դ. Թագ., ԻԲ, 19):

Հեղեղ բարդությունը **հեղ** առանձին անգործածական արմատի կրկնութ-յունն է, որ հանգում է բնիկ հնդեվրոպական *pel արմատին՝ «թափել, լցնել, հոսել» իմաստով²⁶: Բարդությունը «ուղխ, ջրի հորդ հոսանք» իմաստով գործածվում է գրաբարում: Այդ նշանակությամբ հանդիպում է Աստվածաշնչում, հմմտ (Սիրաք. ԻԱ. 16): Եթէ լինիցի **հեղեղ**՝ ոչ գգասցէ. յանձնապաստան է (Յոր. Խ.18):

Սերող այդ հիմքով է կազմվել **հեղեղատ** (վարարած գետ՝ ձորակի մեջ), որից՝ **հեղեղատել** (հեղեղի պես խուժել՝ քշել-տանել) բառերը. հմմտ. Որ է առ եզերը **հեղեղատին** (Յեսու, ԺԷ. 2): Բազուկք այնր, որ **հեղեղատիցեն**, եւ **հեղեղատեսցին** յերեսաց նորա (Դանի., ԺԱ. 22):

Հեղ առանձին անգործածական արմատով Աստվածաշնչում հանդիպում են հետևյալ կազմությունները՝ **զեղանիլ**, **զեղուլ** (թափվելու չափ լցվել), **զե-դումն** (լիություն). հմմտ. Թուեալ են նմա շիթք անձրեւի եւ **զեղցին** անձրեւով յամպս (Յովք, ՅԶ, 27): Եւ լինէր մրրիկ մեծ հողմոյ, եւ գալիսն ի նաւն **զեղոյր** (Մար., Դ, 37): Եւ ետ Տէր իմաստութիւն Սողոմոնի ... եւ **զեղումն** սրտի իբրեւ գաւազ առ եզեր ծովու (Գ. Թագ., Դ. 29):

Հոպոպ՝ կրկնավոր բնաձայնական կազմություն է, որը զուգահեռներ ունի հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական լեզուներում²⁷: Նշանակում է «թռչուն, կկու». հմմտ. Եւ որ ինչ նման իցէ նոցա, եւ **յոպոպ**, եւ չիղջ (Դե. ԺԱ., 19):

Սօսափին բաղադրության սերող հիմքը՝ **սասափ**, բնաձայնական կրկնավոր կազմություն է **սափ** «շարժել, երերալ, դողալ» արմատից և նշանակում է «թևերի ալերախումից առաջացած ձայն, շրշուն»²⁸. հմմտ. Բայց միայն օդ եւ **սօսափին** լսէի (Յովք., Դ. 17):

2.4. Համակցված հնչյունափոխական գործոններով կրկնավորներ

Աստվածաշնչում հանդիպում են կրկնավոր բարդություններ, որոնց արտահայտության պլանում գործում են հնչյունափոխական համակցված իրո-

26 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 456:
27 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 555:
28 **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., հատ. 4, էջ 290-291:

ղություններ՝ **ձայնդարձ** և **հնչյունաանկում** կամ **հերթագայություն** և **հրնչյունաանկում**: Դրանցից են **զարհուրանք** և **արհալիրք** բարդությունները:

Ջարհուրանք– կազմված է **արհ** «վախ» արմատի կրկնությամբ և **զ** սաստկականով²⁹: Բարդության իմաստն է «սաստիկ վախ. արհալիրք»: Հմմտ. Ոչ երկիցես **ի զարհուրանաց** (Առակ., Գ. 23):

Արհալիր(ք) բարդությունը կազմված է նույն **արհ** արմատի կրկնությամբ՝ «ստկում, զարհուրանք, ցնորք» իմաստներով. հմմտ. Վասն զի **արհալիրք** ի Տեառնէ անկան (Բ Մնա., ԺԵ.5):

2.5. Աձականով կրկնավորներ

Արմատատարբերակային կրկնավորների մեջ կան այնպիսի կազմություններ, որոնց արտահայտության պլանում բաղադրիչներից մեկն ստացել է **հավելատարրային մասնիկ՝ աձական**: Աձականը տվյալ դեպքում չի փոխում բառի սահմանը և նրան նոր իմաստ չի հաղորդում (ի տարբերություն բառակազմական երկրորդական ձևայինների)³⁰: Մեր ընտրանքում այսպիսի կազմություններ են՝ **արհամարհանք**, **աղջամուղջ**, **ձաձանչ**, **տրտունջ**, **տատասկ** բառերը:

Արհամարհանք կրկնավորի հիմնական բաղադրիչն է **արհ** ձևային (< իրանյան *ahr*)³¹: Բարդության արտահայտության պլանում **արհ** արմատն ստացել է **մ** հավելվածային տարրը (մարհ)՝ պահպանելով բառապատկերի ամբողջականությունը: Բարդության իմաստն է «անարգանք, անհոգության, ծաղրանք»: Հմմտ. Յորժամ լսեն **զարհամարհանս** կնոջ թագաւորին, համարձակին իշխել և անարգել զարս իւրեանց (Եպթեր, Ա. 18):

Արհամարհ սերող հիմքով Աստվածաշնչում հանդիպում են **արհամարհել(-իլ)**՝ (անարգել, վատաբանել), **արհամարհութիւն** (արհամարհանք), **արհամարհոտ** (արհամարհող) կազմությունները³². հմմտ. Ջի **արհամարհեցաք** զնեղութիւն ոգւոց նորա, յորժամ աղաչէրն զմեզ (Ծնն., ԽԲ, 21): Ոչ գոյ ի ձեռին իմում չարութիւն եւ ոչ **արհամարհութիւն** (Ա. Թագ., ԻԴ, 12): Գուցէ լինիցիմ առաջի նորա իբրեւ **արհամարհոտ** (Ծնն., ԻԷ, 12):

Աղջամուղջ ծագում է «մութ, մթություն, խավար» արմատից. Բնիկ հնդեվրոպական արմատ է՝ *agh1- ձևից՝ «մութ, խավար, ամպ» իմաստներ

29 Տե՛ս **Աձառյան Հր.**, նշվ. աշխ., հատ. 2, էջ 84:

30 Տե՛ս **Ջահուկյան Գ.** ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն... , էջ 34:

31 Տե՛ս **Աձառյան Հր.** Հայերեն արմատական բառարան, հատ. 1, էջ 323: Գ.Ջահուկյանը, հնարավոր համարելով բառի կրկնավոր կազմությունը, միաժամանակ հավանական է համարում, որ այն փոխառություն է իրանական աղբյուրից՝ *ahramarhi* < **adra* (h)*mryya* «աննշան համարված, ստոր համարված, արհամարհելի» իմաստով: (**Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 92):

32 Հր.Աձառյանն արմատականում վկայում է Պտմ. Աղէքս. երկում **արհ** կախյալ արմատով գործածված **արհամերժեալ** (արհամարհելով մերժված) բարդությունը և այն համարում պակասավոր գրչության հետևանք (նշվ. աշխ., հատ. 1, էջ 323):

րով³³: **Աղջամուղջ** նշանակում է «լուսաբացից առաջ ընկած խավարը». հմնտ. Յերկիր **աղջամուղջին** յախտենական (Յովբ., Ժ. 22): **Աղջամուղջ** կրկնավոր սերող հիմքով բաղարդություններ Աստվածաշնչում չեն հանդիպում:

Տատասկ կրկնավորի արմատական բաղադրիչն է **տաս**. ենթադրվում է՝ այն հանգում է բնիկ հնդեվրոպական *dek'– *dēk' «պատռել, պատառոտել» արմատին, որ կարող է լինել *denk' «կծել» արմատի ոչ ռնգային ձևը՝ – **կ** աճականով³⁴: Բաղադրության առաջին բաղադրիչը կորցրել է վերջնահնչյուն – ս տարրը, և բարդությունն ստացել է **տատասկ** ձևը: Աստվածաշնչում այն գործածվել է «սուր և խոշոր փուշ». իմաստով հմնտ. **Տատասկ** եւ որոգայթ ի ճանապարհս թիրաց, իսկ որ զգոյշ կայ անձին իւրում՝ մերժեսցի ի նոցանէ (Առակ., ԻԲ. 5):

Տատասկ սերող հիմքով բաղարդություններ Աստվածաշնչում չեն հանդիպում:

Ճաճանչ բառի կրկնավոր կազմությունը հավանական է համարվում. այն բխեցնում են իրանական աղբյուրից, սակայն բուն աղբյուրը չի հավաստված³⁵: **Ճաճանչ** ստուգաբանորեն նշանակում է «ճառագայթ»: Գրաբարում գործածական է նաև «լույս, շող, ցուք, փայլ, պայծառություն» իմաստներով, որ հանդիպում է Աստվածաշնչում. հմնտ. Ոչ գոյ նման **ճաճանչ** (Ամովս., Ե. 20):

Ճաճանչ սերող հիմքով բաղարդություններ Աստվածաշնչում չեն հանդիպում:

Տրտունջ բարդության սերող հիմքը բնիկ հայերեն բառ է, որ հանգում է հնիս. der- առանձին անգործածական արմատին³⁶: Բառի արտահայտության պլանում – **ունջ** մասնիկն է, բարդության իմաստն է «գանգատ, դժգոհություն, բամբասանք, չարախոսություն», այդ իմաստներով հանդիպում է Աստվածաշնչում. հմնտ. Վասն լսելոյ Տեառն **գտրտունջ** ձեր (Ելք., ԺԶ. 8): Աստվածաշնչում հանդիպում են կրկնավոր հիմքից կազմված **տրտնջել** (գանգատվել, դժգոհել) բայը և **տրտնջին, տրտնջումն** (դժգոհություն. չարախոսություն) անվանական բարդությունները. հմնտ. Եւ **տրտնջեսց** ժողովուրդն զՄովսիսէ (Ելք. ԺԵ, 24): Դադարեսցէ **տրտնջին** նոցա յինէն (Թիւք. ԺԷ, 10): Եթէ մերժեսցես դու ի քէն զկնձիռսն եւ զձեռնարկութիւն եւ զբանս **տրտնջման** (Եսայ., ԾԸ, 9):

Անշուշտ, կախյալ արմատներով առարկա և հատկանիշ ցույց տվող բառերի (կրկնավորների) ուսումնասիրությունը Աստվածաշնչում կարելի է շա

33 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 39: Գ.Ջահուկյանը **աղջ** անգործածական արմատով վկայում է **աղջութիւն** և **աղջաղջ** բառերը (նույն տեղում):

34 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 723:

35 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 487:

36 Բարդությունը կազմված է արմատի կրկնությամբ՝ der-der-, dɔrdor-, կրճատ գրությամբ՝ dor-d-, dr-d- «մրթմրթալ, հանդիմանել, շաղակրատել» բնածայնական արմատից: Տե՛ս **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., հատ. 4, էջ 440:

րունակել և բառակազմական այլ ասպեկտներ բացահայտել 5-րդ դարի բառային կազմում, սակայն կատարված քննությունը որոշակի գաղափար տալիս է կախյալ արմատներով կրկնավորների արտահայտության և բովանդակության պլանների վերաբերյալ:

Մյուս կողմից՝ մեր ընտրանքում հանդիպող կրկնավորների մեծ մասի նկատմամբ պետք է գործադրել ստուգաբանական եղանակի հնարները, որպեսզի հնարավոր լինի բացահայտել կախյալ արմատների նախնական դերն ու բառական իմաստները: Աստվածաշնչում առկա այսօրինակ բառերի արտահայտության և բովանդակության պլանների հարաբերակցված քննությունը այլ կարգի ուսումնասիրության առարկա կարող է դառնալ:

Այսպիսով՝ Աստվածաշնչի բառային կազմի քննությունը ցույց է տալիս, որ նախագրային հայերենի գոյավիճակում կախյալ արմատներն ունեցել են բառակազմական կենսունակ դեր և մասնակցել են համադրական կրկնավոր բարդությունների կազմավորմանը: Այդ կարգի կազմությունների մեջ զգալի կշիռ ունեն առարկա և հատկանիշ ցույց տվող բառերը, որոնք, որպես կրկնավոր բարդություններ, մենք դարձրինք քննության առարկա:

Այդ կարգի բառերի քննությունից կարելի է եզրակացնել, որ կախյալ արմատները բառակազմական քայլերի են մասնակցել որոշակի եղանակով, որը պայմանավորված է արմատի անհնչյունափոխ վիճակով (բառապատկերի պահպանումով), արմատի հնչյունափոխված տարբերակով (արմատատարբերակներով). Վերջին դեպքում կարևոր հնչյունափոխական գործոններ են համարվում արմատի ձայնավորի ձայնդարձն ու բաղաձայնների հերթագայությունը, արմատահնչյունի անկումը, արմատում հավելատարրային մասնիկի (հնչյունի) առկայությունը՝ աճականը և այլն:

Կախյալ արմատներով կրկնավորների համաժամանակյա ուսումնասիրությունը կարող է հիմք հանդիսանալ բառակազմական տվյալ տիպի տարժամանակյա հետազոտության համար՝ լեզվի զարգացման տարբեր գոյավիճակների միջև:

Լալիկ Մ. Խաչատրյան – հրատարակել է 20 գիրք (մենագրություններ, դպրոցական և բուհական դասագրքեր, բառարաններ), տպագրել է շուրջ 170 գիտական հոդվածներ: Զբաղվում է ընդհանուր լեզվաբանության, հայոց լեզվի պատմության և հայոց լեզվի տեսության հարցերով: Հետաքրքրությունների շրջանակներում են գրաբարի տիպաբանության և Աստվածաշնչի բառային կազմի ուսումնասիրության հարցերը:

WORDS WITH DEPENDENT ROOTS SHOWING SUBJECT AND QUALITY IN THE BIBLE

(Recursive compounds)

Lalik M. Khachatryan

Key words – dependent root, reduplicative compound, parts-of-speech showing quality, root-reduplication, root-variant, root-reduplicats, vowel alternation, consonant alternation, sound dropping, augmentative.

The article discusses such synthetic reduplications with dependent roots which were used in the Bible for the first time and express subject and quality.

Such reduplicative compounds are grouped by the meaning of components of dependent root and are included in different groups; root groups and root-variant groups.

1. **Root reduplications** are unique constructions which have different structures;

a) reduplication of simple root (ծործոր - flowing, ջախջախ - smash, smash up),

b) are formed with secondary (word-forming) morphemes (անփնփնիսելի- invariable, աղաղակ - cry, shout, արարիչ - creator, թաթաթաթուն - secretly).

2. In the structure of **root-variant reduplications**, which form a special group, the second component is a variant of dependent root. Different sound interchange factors form such structures; vowel alternation (սարսուտ - trembling, սպասսպուտ - wholly, entirely), alternation (անդանդաղ - slowly, կարկան - a heap of stones, կարկուտ - hail, բողբոջ - bud, պաղպաղ - bright, shining), sound dropping (դադար - rest, peace, թրթուր - larva, խախուտ - unsteady, կակուղ - soft, gentle, հեղեղ - flood, սոսափին - rustling), augmentative (արհամարհանք - neglect, աղջամուղջ - twilight, տատասկ - blackthorn, ճաճանջ - ray).

щение (սրիսիսրիսիսր - презрение, տիջիսիսիս - сумерки, տիտիսիս - терновник, ճիճիսիս - луч).

В Библии засвидетельствованы редупликаны, в структуре которых встречаются комбинированные изменения: чередование гласного и отпадение звука или альтернация и отпадение звука: Գարիհուրիսիսր - ужас, кошмар, սրիսիսիսր - бедствие.

Синхроническое исследование связанных редупликантов может быть использовано для диахронического исследования данной реалии.

REFERENCES

1. **Abrahamyan A. A.**, Bayē zhamanakakits' hayerenum, vol. 1, Yer., Haykakan SSH gitut'yunneri akademiayi hratarakch'ut'yun, 1962 (**In Armenian**).
2. **Acharyan H. H.**, Liakatar k'erakanut'yun hayots' lezvi hamematut'yamb 562 lezuni, vol.3, Yer., Haykakan SSH gitut'yunneri akademiayi hratarakch'ut'yun, 1957 (**In Armenian**).
3. **Aրակ'elyan V. D.**, Hingerord dari hay t'argmanakan grakanut'yan lezun ev vohčē, Yer., Haykakan SSH gitut'yunneri akademiayi hratarakch'ut'yun, 1984 (**In Armenian**).
4. Astvatcashunch' matean hin ev nor ktakaranats', Yer., Hayastani Astvatcashunch'ayin ēnkerut'yun, 1997 (**In Armenian**).
5. **Jahukyan G. B.**, Hayeren stugabanakan bařaran, Yer., «Asoghik» hratarakch'ut'yun, 2010 (**In Armenian**).
6. **Jahukyan G. B.**, Zhamanakakits' hayereni tesut'yan himunk'nerē, Yer., Haykakan SSH gitut'yunneri akademiayi hratarakch'ut'yun, 1974 (**In Armenian**).
7. **Jahukyan G. B.**, Zhamanakakits' hayots' lezvi imastabanut'yun ev bařakazmut'yun, Yer., Haykakan SSH gitut'yunneri akademiayi hratarakch'ut'yun, 1989 (**In Armenian**).
8. **Khach'atryan L.M.**, Krknavor bardut'yunneri achakanov ev nakhdivor tiperē Astvatcashunch' matyanum, Gyumri, HH GAA, Shiraki hayagitakan hetazotut'yunneri kentron, «Gitakan ashkhatut'yunner», *N 21*, 2018 (p 64-75) (**In Armenian**).
9. **Khach'atryan L.M.**, Krknavor bardut'yunneri armatakan tipē hayeren Astvatcashunch' matyanum, Yer., Banber Yerevani Hamalsarani, Hayagitut'ut'yun, Yerevani Petakan Hamalsarani hratarakch'ut'yun, N 1, 2019 (p. 52-62) (**In Armenian**).
10. **Khach'atryan L.M.**, Krknavor bardut'yunneri dzaýndardzov ev hertagayut'yamb tiperē Astvatcashunch' matyanum, Yer., Banber Hayagitut'yan, HH GAA «Gitut'yun» hratarakch'ut'yun, N 3, 2018 (p. 194-205) (**In Armenian**).
11. **T'umanyan Ė. G.**, Drevnearmyanskiy yazik, M., Nauka, 1971 (**In Russian**).

Համառոտագրություններ

Անովս - Անովս

Անգէ- Անգէոս

Առակ- Առակք Սողոմոնի

Բ. Տիմոն.- Թուղթք Պաղոսի Առաքելոյ, Առ Տիմոթէոս Բ.
 Դանի.-Դանիէլ
 Դատ. - Դատաւորք
 Եսայ.- Եսայի
 Ելք- Ելք
 Եզե.- Եզեկիէլ
 Եսթեր- Եսթեր
 Եզր- Եզր
 Զաքա.- Զաքարիայ
 Թագ.Ա. - Թագաւորութեանց Ա
 Թեսա. - Թուղթք Պաղոսի Առաքելոյ, Առ Թեսաղոնիկեցիս Ա.
 Իմաս.- Իմաստութիւն Սողոմոնի
 Ղե. - Ղեւտական
 Ղուկ.- Աւետարան Ղուկասու
 Մակ. Ա. Բ. Գ.- Գիրք Մակաբայեցոց Ա. Բ. Գ.
 Մաղա. - Մաղաքիա
 Մատ.- Աւետարան ըստ Մատթէոսի
 Մար.- Աւետարան ըստ Մարկոսի
 Յակո.- Թուղթք Յակոբայ Առաքելոյ
 Յովք- Յովք
 Յովել - Մարգարէութիւն Յովելայ
 Նաւում- Նաւում
 Նէեմի - Նէեմի
 Ովսէ- Ովսէէ
 Սաղ.- Գիրք Սաղմոսաց
 Սիրաք- Սիրաք
 Փիլիպ.- Թուղթք Պաղոսի Առաքելոյ, Առ Փիլիպեցիս
 Օրենք-Բ.- Երկրորդումն Օրինաց